

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

(1941—1945 ԹԹ.)

Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի թելադրությամբ մեծ հաղթանակի 30-ամյակի առթիվ (1945—1975 թթ.), «Էջմիածին» ամսագրի սույն համարում հրատարակության ենք պատրաստել Հայկական ՍՍՀ պետական կենտրոնական պատմության արխիվի համար 409՝ «Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդ» ֆոնդից առայժմ միայն 22 փաստաթղթեր, և հրատարակվող փաստաթղթերից 4-ի լուսանկարները, որոնք վերաբերվում են Մայր Աթոռի և նրա գլխավորությամբ ու կոչերով սփյուռքի ողջ հայության ցույց տված բարոյական և նյութական աջակցությանը Հայրենական մեծ պատերազմի հաղթանակին:

Մայր Աթոռ ս. Էջմիածինը, որպես պատմական կենտրոնը Հայաստանյայց եկեղեցու, և սփյուռքահայությունը քաջ գիտակցում էին, որ Հայրենական պատերազմի ծանր օրերին որոշվում էր նաև ընդհանրապես Հայաստանի և հայ ժողովրդի բախտը:

Ահա թե ինչու Մայր Աթոռն ու սփյուռքի հայ եկեղեցու նվիրապետական տեղական մյուս Աթոռները ու թեմերը և սփյուռքահայությունը սիրով ու զոհողությամբ իրենց լուման ներդրեցին Հայրենական պատերազմում մեր վերածնված հայրենիքը պաշտպանելու և հաղթանակն ապահովելու սրբազան գործում:

Արդարև մեծ է Մայր Աթոռի և ազգընտիր տեղակալ տ. Գևորգ արքեպ. Չորեքչյանի (ապա Գևորգ Զ կաթողիկոսի) կատարած հայրենասիրական դերը 1941—1945 թթ., դեր, որի մասին հանգամանորեն և սպառիչ կերպով խոսում են հրատարակվող փաստաթղթերը:

Մայր Աթոռի, հայ եկեղեցու և սփյուռքահայության կատարած սույն հայրենասիրական գործն արժանացել է հայրենի և կենտրոնական կառավարության ուշադրությանն ու շնորհակալությանը, ինչպես ցույց են տալիս սույն փաստաթղթերը:

Բացի համար 1, 3, 4, 5, 18, 19 փաստաթղթերից, մյուս փաստաթղթերը, որոնցից մի մասը թարգմանվել են ռուսերենից, հրատարակվում են առաջին անգամ, մեծ հաղթանակի 30-ամյակի առիթով: Սույն փաստաթղթերը, որոնք հրատարակվում են ժամանակագրական կարգով, պատմական կարևոր արժեք են ներկայացնում և միաժամանակ լույս սփռում 1941—1945 թթ. Մայր Աթոռի և սփյուռքահայության կողմից հայրենիքի պաշտպանությանը նվիրված բարոյական, նյութական օգնությանը, ինչպես նաև հայ եկեղեցու և պետության հարաբերությունների վերաբերյալ հարցերի վրա:

ՀԱՄԼԵՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմության արխիվի գիտա-տեղեկատու բաժանմունքի ստեղծման և կատարելագործման բաժնի վարիչ

№ 1

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ Տ. ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻ ԿՈՉԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ ԵԼՆԵԼՈՒ ԵՎ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոչ հայ ժողովրդին

«Վասն Սիոնի ոչ լռեցից և վասն
Երուսաղեմի ոչ հերեցից»:
(Եսայ. ԿԸ 1):

«Ինչ էլ գա գլխիս—ասում է մարգարեն—Ես՝ Սիոնն ու Երուսաղեմը՝ իմ հայրենի քաղաքն ու տաճարը մոռանալ չեմ կարող»:

Մեր հայրենիքը՝ Մայր Հայաստանն է: Հայ ժողովրդի սրբության սրբոցը՝ ս. Էջմիածինը, հայ եկեղեցու ծագման ու հաստատության օրորանը և նորա կենտրոնը:

Հանուն հայրենիքի, հանուն մեր հավատի և խղճի ազատության՝ բողոքելով անարդարությունների և օտար բռնակալության դեմ, մեր նախնիքը դարեր շարունակ կյանքի և մահու պայքար են մղել բռնակալության դեմ, որ մարմնի գերության հետ հոգու գերության էր ձգտում:

Հայ ժողովրդի այս դյուցազնական պայքարի և դիմակալության ոգին ցայտուն արտահայտված է Վարդանանց պատերազմի մեջ: Հայ պատմության այդ շրջանում՝ հայ մարդու համբերության բաժակը լցված էր օտար բռնակալների անարդարությանց երեսից:

Բողոքող ուժգին ձայն էր պետք, հերոսական ոգի էր պետք, պայքարող ույժ էր պետք, արդարության ձայնը հնչեցնող և նրա դրոշակը բարձր պահող էր պետք: Եվ ահա՝ հայրենիքի սիրով վառված, քրիստոնեական ոգով դաստիարակված, հայ ժողովրդի ազատության համար զոհվելու պատրաստ՝ կանգնած է մեր առաջ քաջ Վարդանը:

Նա կանգնած է որպես հաղթական հերոս, հավատարիմ, անկաշառ և անդավաճան սպասավորը հայ ժողովրդի: Նա մարմնացումն է Ե դարու ոգու և արտահայտիչը հայ ժողովրդի բնութագրի՝ արդարամտության, անձնվիրության և ազատասիրության:

Այս առթիվ հիշենք և լսենք հայ մեծ պատմագիր ոսկեծղի Եղիշեին.

«Թող մեր արյունը թափվի մարտիրոսների արյան նման, միայն թե մեր հայրենիքն ու եկեղեցին չընկնի հեթանոսների ձեռքը»:

Մի՞թե կարելի է չոգևորվել տեսնելով երիտասարդների կտրճությունը, որոնք ի սեր արդարության և ճշմարտության գերադասում էին հաղթական մահը, քան անարգ կյանքը: Մի՞թե հնարավոր է չհուզվել տեսնելով կանանց և օրիորդների անձնվիրությունը հանուն հայրենիքի և խղճի ազատության:

Այսպես էին մեր նախնիքը, որոնց պարտական ենք մեր ազգային և կրոնական կյանքը՝ մեր գոյությունը:

Վարդանանց զորավարաց հաղթական ոգին ապրել և ապրում է տակավին մեր մեջ և այսօր:

Մենք չպիտի մոռանանք հայ ժողովրդի անցյալում կրած տառապանքներն ու զրկանքները, կոտորածներն ու գերեվարությունը: Մենք միշտ պիտի հիշենք, որ անցյալում բազմիցս մեր երկիրը եղել է օտար բռնակալների և վայրագ ու անխիղճ ազգերի մրցության ասպարեզ, որի հետևանքով ավերակների կույտ էր դարձել:

Հայ եկեղեցին օրհնել է հայ ժողովրդի դիմակալության ոգին, ներշնչել է ազգային անկախության գաղափարը, մշակել է ազգային ինքնագիտակցության զգացումը և՝ խաչն ու Ավետարանը ձեռքին՝ քաջալերելով հայ զորքը, դեպի հաղթություն է առաջնորդել նրան:

Իմ սիրելի հայ զավակունք.

Մենք այսօր հիշում ենք մեր նախնյաց հերոս և անձնազոհ ոգին, մեր բազմաչարչար ժողովրդի բազմիցս կրած տառապանքներն ու զրկանքները այն պատճառով, որ այսօր դամոկլյան սրի պես վերստին կախված է մեր հայրենիքի, ժողովրդի և եկեղեցու գլխին ստրկացման վտանգը:

Հանդես է եկել մի նոր բիրտ ուժ՝ ֆաշիզմը, որը հակառակ է ազատության և կուլտուրայի, թշնամի է քրիստոնեական եկեղեցուն, կեղեքիչ՝ բոլոր մարդկության:

Ֆաշիզմը կրողն է բռնապետության և պատերազմի, ավերող ժողովրդի ստեղծած նյութական և կուլտուրական արժեքների: Ֆաշիզմը կողոպուտի և մահվան դրոշն է:

Հենց այդ ֆաշիստական բիրտ ուժն է, որ նենգաբար ներխուժել է մեր երկիրը՝ Խորհրդային Միության երկիրը, ավեր ու մահ բերելով իր հետ:

Ֆաշիզմը ծրագրել է վերահաստատել մեր երկրում ցարիզմը, նա սպառնում է ինչպես Խորհրդային Միության բոլոր հանրապետություններին, նույնպես նաև Հայաստանի Հանրապետության, առաջ բերել ռեակցիա և ստրկացնել:

Քսան և ավելի տարի է, որ Խորհրդային Միությունը վարում է խաղաղասեր քաղաքականություն արտաքին աշխարհի նկատմամբ և իր ամբողջ մտավոր, բարոյական և նյութական ուժը տրամադրել է Խորհրդային Միության երկրների շինարարության, նորա բազմազգ ժողովուրդների զորացման և նոցա մտավոր ու ազգային կուլտուրայի զարգացման:

Ինչպես արևի կենսատու ճառագայթների ազդեցության շնորհիվ զվարթանում ու կենդանանում է թառամած ծաղիկը, այնպես էլ մեր Մայր Հայաստանը ռուս մեծ ժողովրդի աջակցության շնորհիվ աղքատության ճիրաններից և ավերակների ծոցից ելնելով՝ վերակենդանացավ և դարձավ զորավոր ու հարուստ երկիր: Հայ քրտնաջան ժողովուրդը այդ տարիների ընթացքում ստեղծեց նյութական ու կուլտուրական շատ արժեքներ:

Մեր ժողովրդի և եկեղեցու թշնամիները հայությունը ջլատելու նպատակով՝ տարածեցին մոլորեցուցիչ լուրեր, որ իբր թե խորհրդային իշխանությունը կործանում է հայ եկեղեցու կենտրոնը՝ ս. Էջմիածինը: Որ խորհրդային իշխանությունը չի միջամտում եկեղեցական գործերին և որ Խորհրդային Միության մեջ պահպանված է խղճի ազատությունը, հաստատում է նորերս ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովը արտասահմանյան թեմերի պատգամավորների մասնակցությամբ: Նույնը հաստատում են խորհրդային երկրի բազմաթիվ քաղաքներում գոյություն ունեցող հայ եկեղեցիները:

Հայը՝ բացի Խորհրդային Հայաստանից չունի այլ հայրենիք: Հայը՝ Հայաստանից դուրս՝ չունի այլ հաստատման կովան, բացի հայ եկեղեցին և նրան գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետությունը ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռով:

Աշխարհի բոլոր ազգերի կատարյալ համակրանքը և Խորհրդային Միության 200 միլիոն ժողովրդի միակամ և միախորհուրդ գործելակերպը, որով մղում է հայրենի սրբազան պատերազմ իր հայրենիքի, նրա քաղաքական ազատության և տնտեսական ու կուլտուրական նվաճումների պաշտպանու-

թյան համար՝ գրավական է Խորհրդային Միության վերջնական հաղթության:

Աջակցել Խորհրդային Միության նշանակում է աջակցել հայրենիքին: Խորհրդային Միության հաղթանակը՝ հաղթանակն է նաև հայ ժողովրդի:

Ամեն հայ մարդ, որ նախանձախնդիր է իր հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի բարգավաճման՝ նա կաջակցի անշուշտ և կպաշտպանե Խորհրդային Միությունը:

Թող ընդմիշտ կենդանի մնա մեր մեջ Վարդանանց պայքարի ու դիմակալության ոգին, որը միայն կարող է հաղթել անօրեն թշնամուն և ապրեցնել մեր ազգը:

Թող Տերը անսասան պահե Խորհրդային երկիրը՝ ուրախություն Խորհրդային Միության ժողովուրդների և ամբողջ քաղաքակիրթ մարդկության:

Նախագահ Գերագույն հոգևոր խորհուրդի
Ազգընտիր տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետության

Գևորգ արքեպիսկոպոս

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 888, թ. 5, տպագիր, բնագիր:

Ծնթ. Սույն կոչը, որը նվիրապետական Աթոռներին և թեմերին ուղարկվել է 1941 թ. հուլիսի 20-ին, հրատարակված է «Էջմիածին» ամսագրում, 1944 թ., № 1, էջ 6—8:

№ 2

ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Տ. ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ՝ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՑՈՒՅՑ ՏՐՎԱԾ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

№ 337 5 դեկտեմբերի 1941 թ.

Սովետական Հայաստանի մեծարգո խմբագրությանը

Սովետական ժողովուրդները մղում են հայրենական սրբազան ու արդար պատերազմ ընդհանուր հայրենիքի և իրենց ստեղծած խոշոր քաղաքական, կուլտուրական և տնտեսական նվաճումների պաշտպանության համար, ընդդեմ հիտլերյան բարբարոս ոհմակների, որոնք նենգորեն ներխուժել են մեր երկիրը՝ մեր հայրենիքը նվաճելու, բնաջնջելու մեր կուլտուրան, խլելու մեր ազատությունը և մեր ժողովրդին շահագործելու նպատակով:

Սովետական ժողովուրդների զավակների՝ հերոս կարմիր բանակի անձնվեր պայքարը հիացմունք է պատճառում բոլորիս և բարոյական պարտք է դնում թիկունքում ամեն աշխատանք սիրով կատարելու[1] և ամեն աջակցություն ցույց տալու պատերազմի հաղթական ելքը փութացնելու համար:

Սույն խոհերով և զգացմունքներով լցված՝ ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը նվիրաբերում է իր փոքրիկ լուման 261 կիլո պղինձ և 36 կիլո արծաթ—հօգուտ հայրենիքի պաշտպանության ֆոնդին և հավատում է Խորհրդային Միության արդար պայքարի հաղթանակին:

Կյանք սովետական խաղաղասեր և կենսունակ ժողովուրդներին, մահ՝ հիտլերյան արյունռուշտ և ավերիչ ոհմակներին:

Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյան
Ազգընտիր տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետության

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 1645, թ. 1: Բնագիր:

[1] «Ամեն աշխատանք սիրով կատարելու»—գրված է տողավերևում:

№ 3

ԱՋԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻ ԿՈՉԸ ՀԱՅՈՒԹՅԱՆ

Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը իր սրտագին գոհունակությունն է հայտնում Հայաստանի հարազատ զավակներին, որոնք հանդեպ հայրենիքի և հայ ժողովրդի սեր և անձնվիրություն են ցուցադրում և հերոսաբար կռվում բոլոր ճակատներում, ազատագրական պատերազմ մղելով մեր երկիրը ներխուժած գերմանական զորաբանակների դեմ:

Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը իր խորին շնորհակալությունն է հայտնում նաև արտասահմանի հայության, նամանավանդ ամերիկահայության, որ մայր երկրի իր հարազատ եղբայրների ապրումներով է տառապում և՝ նորա վարած ազատագրական պատերազմի հաջողության ու թշնամու շուտափույթ ջախջախման համար՝ չի խնայում իր նյութական և բարոյական աջակցությունը հերոս կարմիր բանակին:

Հայ ժողովուրդը իր շնորհակալությունն է հայտնում ռուս մեծ ժողովրդին, որի աջակցությամբ և իր քրտնաջան աշխատանքի շնորհիվ՝ աղքատության ճիրաններից և ավերակների ծոցից ելնելով՝ վերակենդանացավ և դարձավ զորավոր ու հարուստ՝ և ստեղծեց նյութական և կուլտուրական շատ արժեքներ:

Հայ ժողովուրդը երախտապարտ է զգում իրեն՝ հանդեպ խորհրդային իշխանության, որի շնորհիվ միայն ձեռք բերեց նա իր երազած անկախ պետությունը: Խորհրդային իշխանության աջակցությամբ և նորա մտավոր, բարոյական ու տնտեսական ուժերը տրամադրելու հետևանքով Հայաստանը ավերակ վիճակից վերաշինվեցավ, տնտեսապես զորացավ և ստեղծեց ու զարգացնում է իր սեփական մշակույթը:

Ռուս մեծ ժողովրդի մեծահոգի և մարդասեր վերաբերմունքը դեպի հայ ժողովուրդը ոչ միայն ծնել է հայ ժողովուրդի մեջ երախտագիտության, այլ և մտերմության և սիրո զգացմունք, որի հետևանքով հաստատվել է այդ երկու ժողովուրդների մեջ փոխադարձ անխզելի կապ:

Այս է պատճառը, որ երբ գերմանական աշխարհավեր զորաբանակները ներխուժեցին Խորհրդային Միության սահմանները՝ հայ ժողովուրդն էլ, մյուս եղբայրակից ժողովուրդների հետ, ծառացավ խորհրդային երկիրը ներխուժող թշնամու դեմ և հայրենական սրբազան պատերազմ մղեց ընդհանուր հայրենիքի, նորա քաղաքական ազատության և կուլտուրական նվաճումների պաշտպանության համար:

Մեր նախնիքը դարերի ընթացքում պայքարել են օտար բռնակալների դեմ, որոնք ձգտել են ֆիզիկապես և հոգեպես ստրկացնել հայ ժողովուրդը: Հայ ժողովրդի ազատասիրական և հերոսական ոգու ցայտուն արտահայտություններից մեկն է Վարդանանց պատերազմը, որ մղված է հանուն հայրենիքի քրիստոնեական կրոնի ազատության:

Պատերազմի հերոսը Վարդանն է իր քաջարի ընկերներով, որ քրիստոնեական ոգվով դաստիարակված, հայրենիքի սիրով վառված, հայ ժողովրդի ազատության համար զոհվելու պատրաստ, կանգնած է մեր առաջ:

Մեր առաջ կանգնած է նաև պատերազմի հոգևոր հերոսը, Ղևոնդ երեցը իր ընկերներով, որոնք օրհնել են հայ ժողովրդի պայքարող հերոսական ոգին, ներշնչել են ազգային անկախության գաղափարը և՝ խաչն ու Ավետա-

բանը ձեռներին՝ բաշալերել հայ զորքը և դեպի հաղթություն առաջնորդել նրան:

Վարդանն ու Ղևոնդ երեցը իրենց ընկերներով մարտիրոսացան, բայց փրկեցին հայրենիքն ու հայրենի կրոնը, և երախտագետ հայ ժողովուրդը անմահացրեց նոցա հիշատակը դասելով նոցա սրբոց կարգը և նոցա հիշատակին տարեկան տոն սահմանելով:

Հայ ժողովրդի այս ազատասեր և պայքարող ոգու շնորհիվ է, որ իններորդ դարում Բագրատունյաց ջանքերով ազատվեցավ Հայաստանը արաբական լծից և ինքնուրույն դարձավ: Նույն այդ պայքարող ոգու շնորհիվ է, որ 11-րդ դարում անկախությունը կորցրած հայությունը Ռուբինյանց շնորհիվ Կիլիկիայում անկախություն ձեռք բերեց:

Ոչ միայն հայոց պատմական կյանքը, այլ և նորագույն կյանքը հարուստ է նման երևույթներով, որոնց սիրուն և հմայիչ պատկերներ տալիս են Բաֆֆին, Աբովյանն և ուրիշները:

Հայ ժողովրդի այդ պայքարող ոգին է նաև ապրում այսօր, որի շնորհիվ նորա հավատարիմ զավակները, իբրև մի մարդ միացած, մյուս եղբայրակից ժողովուրդների հետ՝ ծառացել են խորհրդային երկիրը ներխուժած թշնամու դեմ և հայրենական սրբազան պատերազմ մղում ընդհանուր հայրենիքի պաշտպանության համար:

Այսօր՝ երբ թշնամին կանգնած է Կովկասի դռանը և սպառնում է մեր հայրենիքին, նորա ազգային անկախության և ազգային մշակույթին՝ հայ ժողովուրդը, հավատարիմ իր պայքարող ոգու՝ ևս առավել ոգեշնչված է իր հայրենիքն ու իր սրբությունները պաշտպանելու: Սուրբ է նորա կամքն ու պայքարը և Էջմիածինը օրհնող է նորա կամքն ու զենքը:

Ամոթ և նախատինք նոցա, որոնք կդավաճանեն մեր հայրենիքի շահերին, որոնք Վասակի և Հուդայի նման, դավաճանելով ժողովրդին և իրենց հայրենիքին՝ կծառայեն թշնամուն: Հայ ժողովուրդը այսպիսիներին դատապարտության սյունին կգամե: Ինչպես պատմությունը վարվել է դավաճան Վասակի և մատնիչ Հուդայի հետ:

Ազգերի իրավունքն է ազատ ապրել, հայրենիք ունենալ և այնտեղ իրենց վիճակն ազատորեն ինքնորոշել: Ընդհանուր մարդկային այս տարրական իրավունքի պաշտպանության համար է, որ պայքարում են միութենական երկրի բոլոր ժողովուրդները և՝ իրենց այդ արդար իրավունքի պաշտպանության հետևանքով՝ աներևակայելի գազանաբարո հալածանքի ենթարկվում— ծերեր, կանայք և մանուկներ սրախողխող լինում, գերի ընկած հերոս մարտիկներ, անասելի տանջանքների ենթարկվելուց հետո սպանվում, զինվորական հիվանդանոցներ անողոք ռմբակոծվում, շեն քաղաքներ ու գյուղեր գազանաբար ավերվում, որի հետևանքով բյուրավոր ընտանիքներ՝ անտուն-անտեր մնացած՝ տառապալից գաղթի մատնվում:

Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը ուժգնապես բողոքում է այս անիրավությունների դեմ, որ հակառակ է կրոնի և քաղաքակրթության պահանջներին և վիրավորական մարդկային խղճին: Մենք վստահ ենք՝ թե բոլոր կրոններն ու քաղաքակիրթ պետությունները բողոքի ավելի ուժգին ձայն կբարձրացնեն այս գազանաբարո երևույթներին վախճան տալու համար: Սակայն ույժը ույժով է զսպվում, և ույժը միության մեջ է: Ուստի պետք է միանան բոլոր նոքա, որոնք անարդարության զոհ են գնացել, բոլոր նոքա, որոնք անարդարություն ճաշակելու դրանն են կանգնած, պիտի պայքարեն բոլոր զորավորները, որոնք արդարության և ճշմարտության դավանողներ

են, որոնք մարդկային ազատության կողմնակից և կուլտուրական արժեքների պաշտպան են, որոնք կամենում են ապագայում ազատ ապրել ու զարգանալ:

Հայ ժողովուրդը այսօր ավելի, քան երբևէ հավատում է մեր և դաշնակիցների հաղթանակին: Մեր վախճանական հաղթության գրավականն է Խորհրդային Միության ժողովուրդների բարոյական միությունը և նյութական լայն աջակցությունը բանակին: Մեր քաջարի զորքի հերոսությունը, նորա ցմահ պայքարելու և թշնամուն դիմադրելու աննկուն կամքը, բոլոր մյուս ազգերի համակրությունը: Անգլիայի և Ամերիկայի հզոր և հարուստ պետությունների դաշնակցությունն ու աջակցությունն և մեր պայքարի արդարությունը:

Թո՛ղ Տերը տևական անե հայ ժողովրդի պայքարող ոգին և նորա միությունը պահպանե:

Թո՛ղ Տերը զորացնե մեզ մեր հայրենիքը պաշտպանելու և թշնամուն ջախջախելու:

Թո՛ղ Տերը արդարության և բոլոր ազգերի իրավունքի պաշտպան հանդիսանա՝ պարգևելով նոցա արդար հաղթանակ, որպեսզի ազեկոծ աշխարհը խաղաղի և ետ պատերազմյան մարդկային կյանքը արդար սկզբունքներով կառուցվի:

Տերը մեզ հետ է և մեր հաղթանակը անխուսափելի. «Եթէ Տէր ընդ իս է, ո՞վ կարէ կալ մեզ հակառակ»:

Նախագահ Գերագույն հոգևոր խորհրդի՝

Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյան
Ազգընտիր տեղակալ Ամենայն Հայոց
Հայրապետության

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գործ 5190, թերթ 2—3:

Մեր.—Սույն կոչը առաջին անգամ հրատարակվել է «Հասկ» ամսագրում, 1942 թ., № 9—12, էջ 150—152:

Սույն կոչը 1942 թվականի սեպտեմբերի 20-ին պաշտոնական կից գրություններով ուղարկվել է սփյուռքի հովիվապետական Աթոռներին, ներքին և արտաքին բոլոր հայկական թեմերին:

№ 4

Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻՆ՝ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՏԱՆԿԱՅԻՆ ՇԱՐԱՍՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑՆԵՐ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

№ 2706 22 հունվարի 1942 թ.
Մոսկվայից

Բարձրագույն կառավարական, Երևան, Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղակալ արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանին

Խնդրում եմ հաղորդել Սասունցի Դավթի անվան տանկային շարասյան կառուցման համար միջոցներ ներդնող հավատացյալ հայությանը և Էջմիածնի

կաթողիկոսության հոգևորականությանը իմ ողջույնը և կարմիր բանակի երախտագիտությունը: Ցուցմունքը, ՍՍՀՄ պետբանկում հատուկ հաշիվ բացելու մասին, տրված է:

Ի. ՍՏԱԼԻՆ

Հանձ. ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 1646, թթ. 3—4, բնագիր, թարգմանություն ռուսերենից:

Бланк № 51

НКСвязи СССР

Адрес

Из Москвы

№ 2706 с 46 по 22 06 10

Эчмиадзин Правительственная Ереван Заместителю Католикоса всех армян Архиепископу Георгу ЧЕОРЕКЧЯН =

= Прошу передать вверенным армянам и духовенству Эчмиадзинского католикосата внесенные средства на строительство танковой колонны имени Давида Сасунского - мой привет и благодарность Красной Армии Так Указание об открытии специального счета в Госбанке СССР дано тчк = И. СТАЛИН =

Телеграфа

1-я тип. Главпромсвязи, зак. 3079

№ 5

ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻՆ՝ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻՆ ՕԳՆԵԼՈՒ՝ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՏԱՆԿԱՅԻՆ ՇԱՐԱՍՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անթվակիր

Մոսկվա, Կրեմլ

Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինին

Մեծարգո Իոսիֆ Վիսսարիոնովիչ, Ձեր հանճարեղ ղեկավարությամբ և Աստծո ողորմածությամբ՝ կարմիր բանակը հաղթականորեն ջախջախում է արյունռուշտ և ատելի թշնամուն, վտարելով նրան մեր սրբազան հողից:

Կարմիր բանակի շարքերում ՍՍՌՄ մյուս ժողովուրդների հետ միասին՝ հերոսաբար մարտնչում են մեր հայրենիքի թշնամիների դեմ նաև հայ ժողովրդի զավակները՝ կատարելով իրենց պարտքը հայրենիքի հանդեպ:

Աղոթում եմ Ամենաբարձրյալին սովետական զենքի հաղթության համար. այլև² կարմիր բանակի ևս առավել զորացման ու թշնամու վախճանա-

կան ջախջախումն արագացնելու նպատակով՝ Էջմիածինը Սասունցի Դավթի անվամբ տանկային շարասյուն կառուցանելու ֆոնդին նվիրաբերում է թանկարժեք իրեր՝ ավելի քան ութ հարյուր հազար ռուբլի արժողությամբ, և հազար անգղիական ֆունտ ստերլինգ և հիսուն հազար ռուբլի:

Այլև խնդրում եմ Ձեր տնօրինությունը ՍՍՌՄ պետական բանկում հատուկ հաշիվ բանալու մասին:

Միաժամանակ հատուկ կոնդակով դիմում եմ աշխարհի բոլոր հավատացյալ հայերին, որ իրենց խնայողություններով մասնակցեն Սասունցի Դավթի անվամբ տանկային շարասյան կառուցմանը: Կատարելապես հավատացած եմ, որ՝ թե՛ տեղական, և թե՛ արտասահմանյան հայությունը կարձագանքե մեր հովվական կոչին, ինչպես արձագանքեց պատերազմի սկզբին մեր կոնդակին՝ կազմակերպելով հայ բոլոր գաղութներում կարմիր բանակին և տուժած բնակչության օգնելու կոմիտեներ, որոնք հանգանակեցին և ուղարկեցին ավելի քան 65.000 դոլլար ու ներկայումս շարունակում են իրենց գործունեությունը:

Թանկագին Իոսիֆ Վիսսարիոնովիչ, ընդունեցեք մեր օրհնությունը և հավատացյալ հայ ժողովրդի ու հոգևորականության ողջույնը:

Ազգընտիր տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետության՝

Գ. Ա. Զ.

Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյան

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 1646, թ. 7: Հեղինակային սևագրություն:

[1] Նամակը թարգմանված է ռուսերեն և ուղարկված Ի. Վ. Ստալինին:

[2] Այնուհետև ջնջված է. մաղթում եմ, որ նա պարգևե:

№ 6

ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻ ԿՈՉԸ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՐԴԻՆ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՕԳՆԵԼՈՒ, «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՏԱՆԿԱՅԻՆ ՇԱՐԱՍՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑՆԵՐ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

№ 24

2 փետրվարի 1943
Էջմիածին

Կոչ

Հայ հավատացյալ ժողովրդին

Մեկ ու կես տարի է, որ գերմանական զորաբանակները ներխուժել են մեր միութենական ժողովուրդներին ստրկացնելու և նոցա երկիրը իրենց նպատակներին շահագործելու համար:

Մեկ ու կես տարի է, որ ռուս ժողովուրդն էլ՝ միութենական մյուս ազգերի հետ, ամեն զոհաբերություն հանձն առնելով, համառ դիմադրություն է ցույց տալիս պաշտպանելու համար իր պատիվը, իր հայրենիքն ու իր ազատությունը:

Պարծանքով պիտի շեշտեմ, որ հայ ժողովուրդն էլ, հավատարիմ իր անցյալ պայքարող ոգուն, իր բոլոր հոգով նվիրվեց Հայրենական աճավոր

պատերազմին, քաջաբար և անձնվիրաբար կռվեց նացիստների աշխարհակալության և բռնակալության դեմ, պատերազմի ընթացքում բազմաթիվ հերոսներ տվավ հանուն Մեծ Միության պատվին ու հաղթանակին, հանուն ընդհանուր հայրենիքի ազատության և անկախության, հանուն մարդկության լավագույն ապագայի:

Ծանր օրեր ապրեց մեր հայրենիքը, ծանր դառնություններ ճաշակեց մեր ժողովուրդը, բայց այդ բոլորը տարավ համբերությամբ, դժվարությանց դեմ մաքառելով, իր բոլոր ուժերը լարելով և տրամադրելով հայրենիքի ազատության գործին, հուսալով և հավատալով Հայրենական պատերազմի հաղթական վախճանին: Եվ չսխալվեցավ:

Այսօր բախտի անիվը դարձել է դեպի մեզ. գերմանական զորքերի ռազմանակատները ամենուրեք ճեղքվել են կարևոր ուղղություններով և նախաձեռնությունը անցել է կարմիր բանակի ձեռքը:

Ամբողջ երկիրը, հայրենասիրական ոգևորությամբ լցված, ջերմագին ողջունում է հայրենիքի պաշտպանության վերին ղեկավարության ու հերոս մարտիկներին: Սակայն մեր առաջը դեռ դժվար պայքար կա, որ պահանջում է մեզնից մեծ զոհաբերություն և՛ մարդու, և՛ դրամի: Մենք մեծ կարիք ունենք **տանկերի և ինքնաթիռների,** և ամբողջ երկիրը զբաղված է այսօր ճակատին այդ կարևոր զենքերը մատակարարելու հոգսով:

Խորհրդային Միության բոլոր ժողովուրդները, հայրենասիրական մեծ ոգևորությամբ տոգորված, և՛ թիկունքում, և՛ ճակատում, խոշոր թափով ու լարված, անձնվիրաբար աշխատում են և կռվում Հայրենական պատերազմի հաղթական վախճանը ապահովելու համար:

Խորհրդային Միության կրոնական համայնքների բոլոր ներկայացուցիչները՝ և՛ քրիստոնյա և՛ ո՛չ քրիստոնյա՝ իրենց հոտով առատ նվիրաբերությամբ նպաստում են թիկունքի զորացման և ճակատի հաջողության:

Էջմիածինն էլ, տեսնելով հայ ժողովրդի ոգևորությունը և անձնվեր աշխատանքն ու պայքարը հանուն հայրենիքի ազատության, իբրև իր ժողովրդի կամքի արտահայտություն, իրավունք համարեց առատ նվիրատվությամբ աջակցել Հայրենական պատերազմի հաջողության և պատասխանատու մեծ դեր է ստանձնել խնդրելով բանալ պետական բանկում հատուկ հաշիվ ի նպաստ պատերազմի:

Իմ սիրելի ժողովուրդ, դո՛ւ որ պատերազմի սկզբից նվիրված ես հայրենիքիդ պաշտպանության և ցանկացել ես տեսնել Հայրենական պատերազմի հաղթական վախճանը, դու որ միշտ հետևել ես ս. Էջմիածնին, դու այսօր էլ անշուշտ առատորեն կբերես քո խնայողություններդ մասնակցելով **Սասունցի Դավթի** անվան տանկային շարասյան կառուցման: Առավել ևս դուք արտասահմանի հայություն, նամանավանդ ամերիկահայություն, որ զատ եք մնացել սահեղ պատերազմի արհավիրքներից և մայր երկրի ձեր հարազատ եղբայրների ապրումներով եք տառապել ու նորա վարած ազատագրական պատերազմի հաջողության համար մինչև այժմ չեք խնայել ձեր նյութական ու բարոյական աջակցությունը կարմիր բանակին և մայր երկրի որբացյալ ընտանիքներին, վստահ եմ թե՝ այժմ էլ ձեր առատ նվերներով, կնպաստեք թշնամու շուտափույթ ջախջախման ու վտարման մեր երկրից:

Օրհնում եմ քեզ, հայ ժողովուրդ, և մաղթում, որ Տերը քո պայքարող ոգին հանուն ազատության և հանուն քրիստոնեական վեհ գաղափարների, միշտ կենդանի պահե:

Օրհնում եմ կարմիր բանակը և նրա Գերագույն հրամանատարությունը

ՀՍՍՌ ԳԱ Հ. Թումանյանի անվան Գրականության Ինստիտուտ Գրադարան Библиотека

և մաղթում, որ Բարձրյալը առավել ևս զորացնե նոցա հայրենիքը պաշտպանելու և թշնամուն ջախջախելով վտարելու մեր երկրից:

Մաղթում եմ ամենաբարի Աստծուն, որ ազատե մարդկությունը այս արհավիրքներից և խաղաղություն պարգևե աշխարհին:

Ազգընտիր տեղակալ Ամենայն Հայոց
Հայրապետության

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 962, թ. 2, բնագիր, մեքենագիր:

№ 7

ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԵՎՈՐԳ ՉՈՐԵՔՋՅԱՆԻՆ՝ ԱՄՆ-ԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴՐԱՄՆԵՐՈՎ ՀԱԳՈՒՍՏԵՂԵՆ ԳՆԵԼՈՒ ԵՎ ԲԱՆԱԿԱՑԻՆՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

№ 0—37 26 ապրիլի 1943 թ.
Երևան



ПРЕЗИДИУМ
ВЕРХОВНОГО СОВЕТА
АРМЯНСКОЙ ССР

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

Երևան

26 - IV 1943 թ.
№ 0—37

4

ԱՄՆԱՅԱՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Տ Ի Ղ Ա Ն Ա Լ -
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԵՎՈՐԳ ՉՈՐԵՔՋՅԱՆԻՆ

Գրում ենք հանձնում տեղեկացնել Ձեզ, որ Միավորյալ Նահանգների
հաշվով ուղարկված 15000 դոլլարը մեր կողմից ստացվել է։ Այդ գումարով
ձեռք է բերված հագուստեղեն, որը բաժանվում է քանակությունների
երեխաներին։

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Միավորյալ Հայաստանի
երեխաների նկատմամբ ցուցաբերած ուշադրության և հոգատարության համար։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐԱԼԻՆՍՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ԴՐԱՆԻՍՅԱՆ ՍՈՒՔԱՍԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

/Հ. ԴԱՆԻՍՅԱՆ/

Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղակալ—
արքեպիսկոպոս՝ Գևորգ Չորեքչյանին

Պարտք ենք համարում տեղեկացնել Ձեզ, որ սովետական կառավարության հասցեով ուղարկված 15580 դոլլարը մեր կողմից ստացվել է: Այդ գումարով ձեռք է բերված լրացուցիչ հագուստեղեն, որը բաժանվում է բանակային երեխաների երեխաներին:

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Սովետական Հայաստանի երեխաների նկատմամբ ցուցաբերած ուշադրության և հոգատարության համար:

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի
Գերագույն սովետի նախագահության քարտուղար

(Հ. Գալստյան) ստորագրություն

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 1655, թ. 4: Մեքենագիր, բնագիր:

№ 8

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻՆ՝ ԹԱՎՐԻԶԻ, ՍԱԼՄԱՍՏԻ, ՈՒՐՄԻԱՅԻ ԵՎ ՄԱՐԱՂԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԿՈՂՄԻՑ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՏԱՆԿԱՅԻՆ ՇԱՐԱՍՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՖՈՆԴԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԱԾ ԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ

(մայիս-հունիս) 1943 թ.*

Էջմիածին, Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղակալ
Գևորգ արքեպիսկոպոսին

Թավրիզի, Սալմաստի, Ուրմիայի և Մարաղայի հայերը հավաքելով 267305 ռեալ հօգուտ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցման ֆոնդի, հանձնեցին ՍՍՌՄ Թավրիզի Գլխավոր հյուպատոսին՝ ըստ պատկանելույն ուղարկելու համար:

Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ
Ներսես արքեպիսկոպոս

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 4105, թ. 14, ռուսերեն հեռագրի թարգմանության բնագիրը, ձեռագիր:

* Ձեռագիրը անթվակիր է, տարեթիվը որոշվել է ելնելով հարակից փաստաթղթերի թվագրությունից:

№ 9

ՍՍՀՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՎԱԼՅՈՒՏԱ-ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ ԳՐԻԳՈՐԵՎԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻՆ՝ ԻՐԱՆԱՀԱՅԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԷՋՄԻԱԾՆԻ ԱՆՎԱՄԲ ՀԱՆԳԱՆԱԿՎԱԾ ՈՒ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆՎԱԾ ԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ

Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատ
վալյուտա-ֆինանսական բաժին

№ 888 7 հունիսի 1943 թիվ
Մոսկվա

Էջմիածնի վանք
Կաթողիկոսի տեղակալ արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանին

Իսպահանի (Իրան) մեր հյուպատոսի հաղորդման համաձայն Զուլֆայի և Հարավի հայկական եկեղեցական խորհուրդը հավաքել ու հյուպատոսության գանձարկղն է մուծել 120.583 ռեալ և 2 ոսկի ռուբլի և խնդրել է տեղեկացնել Ձեզ այդ ներդրման մասին:

Կատարելով Զուլֆայի և Հարավի հայկական եկեղեցական խորհրդի խնդիրը, Արտգործժողկոմի վալյուտա-ֆինանսական բաժինը այդ մասին Ձեզ տեղեկություն է հաղորդում և միաժամանակ հայտնում է, որ ներմուծվող ռեալների էկվիվալենտը փոխանակվելով սովետական վալյուտայի, որը կազմում է 19.811 ռուբլի 79 կոպեկ, 7.6.43 թ. մեր կողմից հեռագրով փոխանցված է ՍՍՀՄ պետբանկի Երևանի գրասենյակի կաթողիկոսի ընթացիկ հաշվի վրա, պահում կատարելով 15 ռուբ., որը ծախսված է նշված գումարը Մոսկվայից Երևան փոխադրելու համար: Մուծված երկու ոսկի ռուբլիները մեր կողմից դեռ չի ստացվել: Նրանց ստացվելու դեպքում կուղարկվեն Ձեզ:

Ընթացիկ հաշվի վրա մուտք եղած գումարների մասին հաղորդեք Արտգործժողկոմի վալյուտա-ֆինանսական բաժին հետևյալ հասցեով.

Մոսկվա, Կուզնեցկի մոստ 21/5 Արտգործժողկոմ, վալյուտա-ֆինանսական բաժին:

Վալյուտա-ֆինանսական բաժնի վարիչ
ստորագրություն (Գրիգորն)

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 1655, թ. 5, բնագիր, մեքենագիր: Թարգմանված է ռուսերենից:

№ 10

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻՆ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՑՈՒՅՑ ՏՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

№ 2447/27 7 սեպտեմբերի 1943

Երուսաղեմ

Ամենապատիվ տ. Գեորգ ս. արքեպս. Չորեքչյան
տեղակալ Ամենայն Հայոց կաթողիկոսության

Մայր Աթոռ, ս. Էջմիածին

Ամենապատիվ ս. Եղբայր,

Ձեր Ամենապատվության հայրենաշունչ և սրտառուչ կոչին ի պատասխան, մեր թեմին մերազն համայնքները հանգանակություն կատարեցին հօգուտ Հայաստանի և գոյացավ ԼՊ, 2000,—(երկու հազար պաղեստինյան ոսկի)։

Սույն գումարը 26 օգոստոսի տեղվույս պանք Օթոմանի միջոցով հեռագրական առաքումով ղրկեցինք Մոսկվայի Պետական պանքին Ձեր Ամենապատվության փոխանցելու Երևանի մեջ և հանձնելու Հայաստանի պետական իշխանության հատուցադրված նպատակին հատկացնելու համար։

Պիտի խնդրենք որ Ձեր Ամենպատիվ եղբայրությունը հեռագրով հաղորդեր մեզ գումարին ստացումը ի տեղեկություն և ի միամտություն բոլոր անոնց որ բարի մտադրությունը ունեցան օգնելու հայրենիքի ազատության և սրբությանց ապահովության և հաղթանակին համար զոհաբերվող իրենց եղբայրներուն և քույրերուն։

Կաղոթենք որ Տիեզերքի արդարության հոգին Աստված իր ամենակարող զորությամբ, հաջողությամբ պսակե անոնց և անոնց պատվական առաջնորդներուն և զենքի ընկերներուն այս զոհաբերությունը և շուտով ծագի խաղաղության և երջանկության նոր արշալույսը ռուսական մեծ ազգին և անոր հովանիին տակ ապրող բոլոր հավատարիմ ժողովուրդներուն։

Մաղթելով առողջություն և արևշատություն Ձեր Ամենապատվության և Գերագույն հոգևոր խորհուրդի պատ. անդամներին,

մնամք եղբայրական ողջույնիվ,
սիրով աղոթակից,

Մեսրոպ արքեպիսկոպոս
Պատրիարք ս. Երուսաղեմի

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 4529, թ. 3, մեքենագիր, բնագիր։

№ 11

ՏԱՆԿԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ Վ. Ա. ՄԱԼԻՇԵՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻՆ

№ 52

2 հոկտեմբերի 1943 թ.
Մոսկվայից

Կառավարական, Հայկ. ՍՍՀ, Էջմիածին
Գերագույն հոգևոր խորհուրդ, արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանին

Գերագույն հոգևոր խորհրդի հավաքած միջոցներով կառուցված Սասունցի Դավթի անվան տանկային շարասյունը պատրաստ է բանակին հանձնելու։ Հեռագրեցեք պաշտպանության ժողկոմատ [ГУФ][1] պետ գնդապետ Կոլոսովին «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը 19598 զորամասին հանձնմանը մասնակցելու համար նոյեմբերի առաջին կեսին Ձեր ներկայացուցչի Մոսկվա գալու հնարավորության մասին։

Տանկային արդյունաբերության ժողովրդական կոմիսար՝

Մալիշև[2]։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 1647, թթ. 1—2, բնագիր։ Թարգմանված է ռուսերենից։

[1] Բնագրում կարդացվում է նաև ԳՏՓ։
[2] Մալիշև Վլադիմիր Ալեքսանդրովիչ (բնագրում ազգանունը աղավաղված է). ինժեներա-տեխնիկական ծառայության գեներալ-գնդապետ, սովետական արդյունաբերության կազմակերպողներից մեկը, պետական գործիչ (1902—1957)։

№ 12

ՏԱՆԿԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ Ն. ԲԻՐՅՈՒԿՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻՆ՝ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՏԱՆԿԱՅԻՆ ՇԱՐԱՍՅԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄՆ ԱՎԱՐՏԵԼՈՒ ԵՎ ԶՈՐԱՄԱՍ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

№ 9871

27 հոկտեմբերի 1943 թ.

Մոսկվայից

Էջմիածին, Ամենայն Հայոց կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք
արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանին

Հայտնում ենք, որ Ձեր հավաքած միջոցներով կառուցվել է Սասունցի Դավթի անվան տանկային շարասյունը։ Տանկային շարասյունը որոշված է զորամաս հանձնել ս. թ. նոյեմբերի վերջին որ/ГУФ 32[1]։

Տանկային զորքերի գեներալ-լեյտենանտ

Բիրյուկով[2]

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 1647, թ. 3, բնագիր։ Թարգմանված է ռուսերենից։

[1] Հասցեի հապավումը չի թարգմանվում. հրատարակվում է նույնությամբ։
[2] Բնագրում գրված է Բիրյուխով։

№ 13

ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ «ՄՈՍԿՈՒ ՆՅՈՒԶ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ՝ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻ ՀԵՏ ԻՐ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

4 փետրվարի 1944 թ.

Հարցազրույց Հայոց կաթողիկոսի տեղակալ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի հետ

Ձեր առաջարկը՝ ինձ ուղղած, ինտերվյու ունենալու կաթողիկոսի տեղակալ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի հետ Ձեր առաջադրած հարցերի համար, կատարում եմ սիրով:

Տեսակցությունը տեղի է ունենում Էջմիածնում, կաթողիկոսարանի (Վեհարան) «Ծաղկյալ» կոչված դահլիճում, որ կառուցված է 17-րդ դարում: Դահլիճի առաստաղը արևելյան ստիլի ծաղկանկար ֆրեսկաներ ունի, որոնցից և ստացել է իր անունը: Դահլիճը զարդարված է նշանավոր կաթողիկոսների պատկերներով, Էջմիածնի և ուրիշ հին հռչակավոր վանքերի նկարներով—բոլորն էլ գործեր հայ անվանի նկարիչների:

Սրբազան տեղակալին առաջարկում եմ Ձեր հարցերը:

Ինչպե՞ս արձագանքեցին արտասահմանյան հայկական շրջանները տեղակալի հայտնի վերաբերմունքին, որի մասին հրատարակված էր «Moscow News»-ի մեջ:

Սրբազանի պատասխանը:

— Հայրենական պատերազմի առթիվ մեր ուղարկած կոչերն ու դիմումները աշխարհում սփռված հայությանը—ուր որ հայ համայնքներ և եկեղեցիներ կան—ջերմ արձագանք գտան: Ամերիկայում, Եվրոպայում և արևելքում հայ համայնքները միտինգներ կազմեցին, մեծ ոգևորությամբ ընտրվեցին հանձնախմբեր տնտեսական և բարոյական աջակցություն ցույց տալու սովետական ժողովրդին գերմանաֆաշիստական զավթիչների դեմ մղվող Հայրենական պատերազմում: Ստացվեցին դրամական գումարներ, նպաստ մեր պանծալի կարմիր բանակին, և «Սասունցի Դավթի» տանկային զորասյուն կազմելու համար. նախ դեղեր: Դրամական այդ օժանդակությունները եկան Նյու-Յորքից, Ֆրեզնոյից, Բուենոս-Այրեսից, Սիրիայի քաղաքներից, Կիպրոս կղզուց, Թավրիզից, Սպահանից և այլ վայրերից. անընդհատ շարունակվում են հանգանակությունները, ինչպես և գրավոր և բանավոր պրոպագանդան ընդդեմ ֆաշիզմի, նպաստ խորհուրդների մեծ միության և Հայրենական պատերազմի հաղթանակի:

Ստացված գումարների լրիվ ցանկը կհրապարակվի շուտով լույս տեսնելիք Մայր Աթոռի օրգան «Էջմիածին»-ի հունվար-փետրվար համարում:

2. Ի՞նչ մասնակցություն ունի հայ-լուսավորչական եկեղեցին պատերազմին. կոնկրետ՝ դրամական և իրային հանգանակություններ, քարոզներ՝ ուղղված հավատացյալներին:

Սրբազանը պատասխանում է.

— Պատերազմի սկզբից բազմաթիվ կոչեր ենք ուղարկել հայերին և հայ եկեղեցիներին, սակայն դրանց միջից առանձնացնում ենք «Կոչ համայն հայության» վերնագիր կրողը, որը խրախույս էր կարդում խանդավառ հորդորանքներ հայ ժողովրդին և հայ զինվորներին անձնուրացությամբ կռվելու մեր

մեծ հայրենիքը պաշտպանելու համար, հայրենի նվիրագործված սրբությունները, հայրենիքի և ժողովրդի պատիվը պաշտպանելու համար կյանքի և ստացվածքի գնով: Այս իր հերթին որոշ չափով նպաստեց մեր մարտիկների քաջությամբ կռվելուն, ինչպես նաև թիկունքի նվիրվածությանը և միասնությանը:

— Կաթողիկոսարանը՝ գիտակից իր հայրենասիրական պարտքին, պատերազմի առաջին ամիսներում, նվիրեց հայրենիքի պաշտպանության կարիքներին պատմական և հնագիտական արժեք չներկայացնող զգալի քանակությամբ արծաթեղեն և պղնձեղեն, իրեր, իսկ հետո Սասունցի Դավիթի անունով տանկային շարասյուն կազմելու ֆոնդին ուրիշ մեծարժեք իրեր 800,000 ռուբլի արժողությամբ, 75,000 ռուբլի դրամով, 1000 անգլիական ֆունտ ստերլինգ:

Այս առթիվ մեծ պատիվ ունեցա մեր մեծանուն առաջնորդից՝ մարշալ Ստալինից շնորհակալական հեռագիր ստանալու Էջմիածնի հոգևորականությանը և հայ հավատացյալներին ուղղված:

3. Տեղակալը ի՞նչպես է արժեքավորում Հայկական ժողկոմսովետին կից՝ հայ-լուսավորչական եկեղեցու գործերի խորհրդի ստեղծումը:

Սրբազանը պատասխանում է՝

— Եկեղեցու գործերի խորհրդի ստեղծումը երաշխիք է սովետական իշխանության բարյացակամությանը, դեպի Էջմիածինը, դեպի եկեղեցին: Այդ խորհրդի ստեղծումը նպաստում է հայ եկեղեցուն վերաբերվող կարևոր հարցերի լուծմանը նրա թե՛ տնտեսական և թե՛ կուլտուրական գործունեության ասպարեզում:

Դրա շնորհիվ դյուրացավ և արագացավ Էջմիածնի օրացույցի լույս ընծայումը: Նախապատրաստվում է Մայր Աթոռի օգտին «Էջմիածին» ամսաթերթի 1944 թ. հրատարակությունը:

Այդ օրգանը կրելով կրոնական, հայրենասիրական բնույթ հետապնդում է հետևյալ նպատակները՝

1. Ամրապնդել Էջմիածնի կապը արտասահմանում ապրող հայերի հետ:

2. Հայ ժողովրդի մեջ բարձրացնել իր ունեցած հայրենասիրական զգացմունքները սովետական հայրենիքի՝ հարազատ Հայաստանի հանդեպ:

3. Ընթերցողներին ծանոթացնել Էջմիածնի կյանքի, գործունեության, հայկական եկեղեցու պատմության հետ ընդհանրապես, ինչպես նաև հնության հիշատակարանների հետ:

Էջմիածնի հոգևոր վարչության էական խնդիրները հանդիսանում են՝ պատրաստել հայ եկեղեցու բարձր և միջին կարգի պաշտոնյաներ: Այդ հնարավոր է իրականացնել ճեմարան հիմնելու միջոցով: Այդ հարցով մենք եկեղեցու գործերի խորհրդի միջոցով դիմել ենք կառավարությանը:

— Անկախ այս բոլորից, իբրև ապացույց այն ոգևորության և նշան այն խոր հարգանքի, որ տածում է հայությունը (գաղութահայությունը) դեպի ռուս մեծ ժողովրդի և նրա հանճարեղ առաջնորդ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինը, մեջ ենք բերում Ամերիկայի հայության ներկայացուցչական ժողովի, գումարված անցյալ հոկտեմբերի 3-ին, հեռագիրը, որ ստացված է դժբախտաբար շատ ուշ՝ սույն փետրվարի 2-ին. «Սրանով արտահայտում ենք մեր որդիական սերը և երախտագիտությունը համայն հայության Մայր Աթոռին: Համաժողովը խնդրում է, որպեսզի հանձիք սիրահոժար հաղորդելու անարժաններիս գնահատանքը Ստալինին՝ Սովետական Միության իմաստուն լիդերին՝ որի եռանդուն ղեկավարության շնորհիվ կարմիր բանակը կատարում

է հրաշքներ, հայրենիքի պաշտպանության գործում: Նաև հաղորդել Սովետական Հայաստանի նախագահին մեր նվիրվածությունը և եղբայրական զգացմունքները: Մենք պատրաստ ենք ամեն աջակցություն ցույց տալու մեր նոր Հայաստանի անվտանգությունը ապահովելու համար»:

Ավետիք Իսահակյան

4-ը փետրվարի 1944 թ.

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 936, թ. 1—4, բնագիր, մեքենագիր:

№ 14

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵՎ ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻՆ՝ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՏԱՆԿԱՅԻՆ ՇԱՐԱՍՅԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄ ՀԱՆԳԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

№ 1818

27 ապրիլի 1944 թ.
Բեյրութ

Բարձրաշնորհ
Տեր Գեորգ ս. արքեպս. Չորեքչյան
Ազգընտիր տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետության

Ս. Էջմիածին

Սիրելի Սրբազան Եղբայր,

8 ապրիլ թվակիր Ձեր հեռագիրը իր օրին հաճույքով և մեծ բավարարությամբ ստացեր էինք, որով կավետեիք հարյուր օրինակ Մայր Աթոռի օրացույցներու առաքումը, տասը օրինակը Ձերդ Սրբազնության կողմե մեզի նվիրված, իսկ մնացյալը տեղական արժեքով վաճառելու և դրամը ուղարկելու Երուսաղեմի ամենապատիվ սրբազան պատրիարքին ս. Էջմիածնի համար տպարանական պիտույքներ գնելու: Մեր ուրախությունը անչափ եղավ երբ երկար սպասումե հետո ասկե մոտ շաբաթ մը առաջ հաճույք ունեցանք ստանալու նույնպես 8 փետրվար թվակիր և 26 համարով գրությունը և երեկ ալ կտավյա ծրարներու մեջ հարյուր օրինակ գրպանի կազմված օրացույցները, զորս իբր Հայաստանեն ու Մայր Աթոռեն տեղացած մանանա, ու իբր հոգևոր հայր սիրով տրամադրեցինք, մեզի հատկացված տասը օրինակին հետ հարյուր բարեպաշտ ազգայիններու, որոնք մեծ գոհունակությամբ ընդունեցան մեր միջոցով Ձերդ Սրբազնության կողմե իրենց ուղարկված այս թանկագին նվերը: Կհուսամ վաղը բոլորն ալ իրենց հասցեներուն ղրկելե հետո ավելի քան երկու հարյուր հիսուն դոլլար կամ տասը հազար ֆրանք ուղարկել Երուսաղեմի ս. պատրիարքին:

Ծուրջ տասը տարիե ի վեր չէինք ընդունած Մայր Աթոռի օրացույց, այս առիթը կպարտինք Ձերդ Սրբազնության արթնամիտ ուշադրության, ինչպես «Սասունցի Դավիթ» հրասայլային զորասյունի այն փառավոր ու հաղթական նախաձեռնությունը, որ պատմական պիտի մնա Ձեր լուսամիտ, Ձեր քաջ հովվի հավիտենական անվան: Ի սրտե կշնորհավորեմ Ձեր Սրբազան Եղբայրությունը, Ձեր գտած այս ամենափայլուն հաջողության և վայելած այսքան ջերմ ժողովրդականության համար, որոնց այնքան արժանի եք: Իբր

Մայր Աթոռի միաբան, ուրիշներե ավելի իմ պարտականությունն է խնդակցիլ Ձեր Սրբազնության ու մոտավոր օր մը թերևս անձամբ:

Ի դեպ՝ ուրախությամբ հաղորդեմ Ձերդ Սրբազնության որ անցյալ 1943 տարվան ընթացքին Պեյրութի Սովիետ Հայաստանի բարեկամներու նախաձեռնությամբ հոս հանգանակված և Թեհրանի միջոցով Հայաստան ուղարկված 8000 լ. ոսկի գումարը անբավական գտնելով մեր ժողովուրդի թվին և որակին, շուրջ ամիս մը առաջ մեր նախագահությամբ կազմվեցավ «Սասունցի Դավիթ» հրաստայլին զորաստյունի համազգային հանձնաժողով, որ ցարդ հաջողեցավ կարճ ատենի մեջ հանգանակել շուրջ յոթանասուն հազար լիբանանական թղթադրամ և որ կհանգի **հարյուր հազարի**, ամենեն մեծ նպաստը բոլոր թեմերեն: Այս մասին առանձին հաղորդագրություն կըլլա Ձեր Սրբազնության:

Մասնավոր գոհունակությամբ տեղեկացանք որ Ձեր Սրբազնության արթնամիտ կարգադրությամբ ի մոտո պիտի վերաբացվի Մայր Աթոռի տպարանը, թե լուս պիտի տեսնի **«Էջմիածին»** ամսագիրը, և ինչ որ ամենեն խրախուսելին է, ի մոտո պիտի վերաբացվի հոգևոր ճեմարանը, շուտով պատրաստելու համար նորահաս եկեղեցականներ: Բոլոր գաղութահայությունը հրճվանքով դիմավորեց երկու օր առաջ Մոսկվայեն հաղորդված սույն բարեդեպ լուրը: Ի սրտե հաջողություն կմաղթեմ Ձեր Եղբայրության ու անկեղծորեն կթելադրեմ որ Երուսաղեմեն երկու բարեկրոն վարդապետ հրավիրեք Մայր Աթոռ, օգնելու համար Ձեր առաջադրած ծրագիրներուն:

Եղբայրական սիրո ողջունիվ, մնամ աղոթակից

Կաթ. փոխ. հայոց Լիբանանի
Արտավազդ արքեպիսկոպոս

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 5195, թ. 1, բնագիր, մեքենագիր:

№ 15

ՍՍՌՄ ՊԵՏԲԱՆԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻՆ՝ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՏԱՆԿԱՅԻՆ ՇԱՐԱՍՅԱՆ ՀԱՇՎԻՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

№ 22 30 ապրիլի 1944 թ.
Երևան

Հայոց կաթողիկոսի տեղակալ Գ. Չորեքչյանին

Երևան

Ի լրումն մեր Ձեզ ուղարկված տեղեկանքին այսու հայտնում ենք Ձեզ ի գիտություն, որ Ձեր հաշվեով ստացված է հետևյալ փոխադրությունները՝

1. Հունվարի 26-ին 43 թ. Մոսկվայից 10000 դոլլար գումարով 53000 ռուբ. (Լոնդոնից)

2. Փետրվարի 18-ին 43 թ. Մոսկվայից 393-53 դոլլար գումարով 2085—71 կ. (Թեհրան)

3. Փետրվարի 21-ին 43 թ. Մոսկվայից 10000 ֆունտ գումարով 213800 ռուբ. ստերլինգ

Ընդամենը—ռուբլի 268885—71 կ.

Միաժամանակ հայտնում ենք, որ համաձայն Ձեր գրավոր կարգադրության, առ 21/4—1944 թ. սույն ամսի 23-ին փոխանցված է «Դավիթ Սասունցու» անվան տանկային շարասյան հաշվին 374885 ռուբ.—71 կոպ. և Գեորգույն հոգևոր խորհուրդի նախագահի հաշվին 42760. ընդամենը 417645 ռ.—71 կ.[1]:

Այսպիսով առ 28-ը մայիսի ս/թ. Ձեր ընթացիկ հաշվին մնում է 35834—11 կ.[2]:

Ուղղված է 417645—71 կ. և 35834—11 կ.[3]

Հաշվապահ (ստորագրություն)

Պետական բանկի Հայաստանի գրասենյակի կառավարիչ

ստորագրություն (Վելիբեկով)

Գլխավոր հաշվապահ ստորագրություն (Մարգարյան)

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 1657, թ. 10, բնագիր, մեքենագիր:

[1] 417645-71- գրված է թանաքով, իսկ նախկին մեքենագիր թիվը ջնջված է (379161 ռ.-71 կ.):

[2] Մեքենագիր գումարի չափը (74318 ռ.-11 կ.) ջնջված է և թանաքով գրված է ճիշտը (35834-11 կ.):

[3] Ամբողջ նախադասությունը գրված է թանաքով:

№ 16

ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐՈՖԵՍՈՐ (Գ) ՀԱԿՈՎԲՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻՆ՝ ԻՐԱՆԱՀԱՅԵՐԻ ԿՈՂՄԻՑ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՏԱՆԿԱՅԻՆ ՇԱՐԱՍՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

№ 84/93 5 մայիսի 1944
Թեհրանից

Էջմիածնի արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանին

Առաջնորդվելով Ձեր հայրենասիրական կոչով, Թեհրանի հավատացյալ հայության տարբեր խավերը հավաքել և 1943 թվականի նոյեմբերի վեցին համար 8660 ընթացիկ հաշվով Սասունցի Դավթի անվան տանկային շարասյան ֆոնդին են մուծել մեկ միլիոն վաթսունչոր հազար հարյուր քառասունհինգ ռեալ: Ամբողջ հոգով կամենում ենք, որպեսզի մեր համեստ լուման օգնություն ծառայի հերոսական հայրենասիրական նախաձեռնությանը: «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար միջոցների ժողովումը շարունակվում է:

Թեհրանի հայկական խորհրդի նախագահ
պրոֆեսոր Գ. Հակովբյան

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 4112, թ. 20, բնագիր, թարգմանություն ռուսերենից:

№ 17

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻՆ՝ ՆՐԱ ԿՈՂՄԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՋԻՆՎՈՐՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

23 մայիսի 1944 թ.
Երևան

Ամենայն Հայոց կաթողիկոսի ազգընտիր տեղակալ
տ. Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին

Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության քարտուղարությունը հայտնում է, որ Ձեր կողմից հատկացված 42.760 ռ. գումարը ստացված է և ամբողջովին կգործադրվի Հայրենական մեծ պատերազմի ճակատներում կռվող մարտիկների ընտանիքների նյութական վիճակը բարելավելու համար:

Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի
նախագահության քարտուղար
ստորագրություն (Հ. Գալուստյան)

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 1657, թ. 11, բնագիր, մեքենագիր:

№ 18

Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻՆ՝ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՏԱՆԿԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՇԱՐԱՍՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑՆԵՐ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բարձրագույն կառավարական
№ 4935-39

Մոսկվա
7 հունիսի 1944 թ.

Տեղակալ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին

Խնդրում եմ հաղորդել արտասահմանի հավատացյալ **հայությանը** (հայերին), որոնք դրամական միջոցներ են ներմուծել Դավիթ Սասունցու անվան տանկային երկրորդ շարասյան կառուցման համար՝ իմ ողջույնը և կարմիր բանակի շնորհակալությունը:

Ի. Ստալին

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 1646, թ. 1, բնագիր, ինքնագիր: Գևորգ արք. Չորեքչյանի կատարած թարգմանությունը ռուսերեն բնագրից:

Ծնթ.—Սույն հեռագիրը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրում, 1944, № 6, էջ 10:


ЕРЕВАНСКИЙ ЦЕНТРАЛЬНЫЙ ТЕЛЕГРАФ НИСВЯЗИ

ПРАВИТЕЛЬСТВЕННАЯ ТЕЛЕГРАММА

Адресу Высшая правительственная Содрес
Ереван Блюстителю Эчмиадзинского
патриаршего престола копия Замес
нителю католикоса всех армян Ар
хиепископу Георгу Чорекяну —
Прошу передать заступничество вернующим
Армянам высшим средствам на стро
ительство своего национального Католикосата
Давид Сасунский мой привет
и благодарность Красной Армии
И. Сталин

№ 19

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԶՐԱՀԱՏԱՆԿԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ, ԶՐԱՀԱՏԱՆԿԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՄԱՐՇԱԼ ՅԱ. Ն. ՖԵԴՈՐԵՆԿՈՅԻ ԵՎ ՏԱՆԿԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԳԵՆԵՐԱԼ-ԳՆԴԱՊԵՏ Ն. ԲԻՐՅՈՒԿՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻՆ՝ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՏԱՆԿԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՇԱՐԱՍՅԱՆ ՏԱՆԿԵՐԻ ՌԱԶՄԱԾԱԿԱՏԻ ՏԱՐԲԵՐ ԶՈՐԱՄԱՍԵՐԻՆ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 հուլիսի 1944 թ.
Մոսկվայից

Կառավարական հեռագիր
Հասցե. Երևան. Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղակալ արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանին

Հայտնում եմ, որ արտասահմանի հայերի ներդրած միջոցներով «Սասունցի Դավիթ» տանկային երկրորդ շարասյունը կառուցված է, և հանձնված է տանկային զորքերի գեներալ-լեյտենանտ Կիրիչենկոյի գվարդիական տանկային միավորմանը: Տանկերի մի մասը ուղարկված է համալրելու փոխ-գրն-

դասեր Վոյնովսկու տանկային զորամասը, որտեղ գտնվում են «Սասունցի Դավիթ» առաջին տանկային շարասյան տանկերը:

Բանակի զրահատանկային զորքերի հրամանատար, զրահատանկային զորքերի մարշալ Ֆեդորենկո[1]



Приняв
Бл. №
Из Москвы
НКСВЯЗИ
Провод №
Служ. отметки
Корректор №1
СССР
ЕРЕВАНСКИЙ ЦЕНТРАЛЬНЫЙ ТЕЛЕГРАФ НКСВЯЗИ
Адрес:
ПРАВИТЕЛЬСТВЕННАЯ ТЕЛЕГРАММА

կարմիր բանակի զրահատանկային և մեքենայացված զորքերի ռազմական խորհրդի անդամ տանկային զորքերի գեներալ-գնդապետ Ն. Բիրյուկով:

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 1647, թ. 6, բնագիր: Թարգմանված է ռուսերենից:

Մեր.—Սույն հեռագիրը այլ թարգմանությամբ հրատարակվել է «Էջմիածին» ամսագրում, 1944, № 6, էջ 11:

[1] Ֆեդորենկո Յակով Նիկոլաևիչ (1896—1947):

№ 20

ՍՍՀՄ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԲԱՆԿԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՍՀՄ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՐԵՎԱՆԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ՝ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅԵՐԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐՎԵԼ Է ՏԱՆԿԱՅԻՆ ՇԱՐԱՍՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԵՎ ՋԻՆՎՈՐՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

№ 4482 28 հոկտեմբերի 1944 թ.
Մոսկվա

ՍՍՀՄ պետական բանկին

Երևան

Վկայակոչելով սույն ամսվա 23-ի ն. 221023 Ձեր հեռագիրը և ի լրումն սույն ամսվա 25-ի մեր հեռագրին, հաղորդում ենք, որ մեր տվյալներով ըն-

դունված են հետևյալ դրամական փոխադրումները հայոց կաթողիկոսի անունով.

ԱՄՆ-ից ամդոլ[1] 20000.—մեր ծանոցագիրը № 17038 26/7—43 թ.
» » 600 » » 13368 16/8—43 թ.
» » 25000 » » 17483 20/8—43 թ.
Անգլիայից անգլոֆունտեր[2] 2000 » » 28092 2/9—43 թ.
(Երուսաղեմի հայկական պատրիարքության հանձնարարությամբ)
ԱՄՆ-ից ամդոլ 10600.—մեր ավիզոն № 19668 17/12—43 թ.
» » 10000 » » » 20153 12/ 1—43 թ.
Անգլիայից անգլոֆունտ 10000 » » » 28413 16/2—44 թ.
(Կահիրեի հայկական պատրիարքության հանձնարարությամբ)

ՍՍՀՄ արտաքին առևտրի բանկ
ստորագրություն ստորագրություն

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 1657, թ. 14, բնագիր: Թարգմանված է ռուսերենից:

[1] Ամերիկյան դոլար:
[2] Անգլիական ֆունտ ստերլինգ:

№ 21

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳՐԻԳՈՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱԿԱՆ ԱՎԱՐՏԻ ՄԱՍԻՆ

9 մայիսի 1945
Էջմիածին

Երևան
Հայաստանի ԿԿ քարտուղար
Գրիգոր Հարությունյանին

Մեր և Էջմիածնի վանքի ամբողջ միաբանության անունից շնորհավորում եմ Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի առթիվ: Այսօր Էջմիածնի Մայր տաճարում վանքի ամբողջ միաբանության մասնակցությամբ և մեծաթիվ աղոթողների ներկայությամբ իմ կողմից կատարվել են երախտահատուցման աղոթքներ: Մեր կողմից Ամենաբարձրյալին հղվեցին ջերմ աղոթքներ ժողովուրդների և ճնշված մարդկության առաջնորդ Ստալինին առողջություն ու երկար կյանք պարգևելու համար: Մեր կողմից հեռագրով առաջարկված է ներքին և արտաքին քաղաքական թեմերի պետերին կատարելու հանդիսավոր մաղթանքներ:

Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղակալ արքեպիսկոպոս
Գևորգ Չորեքչյան

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 1676, թթ. 2—3, ինքնագիր:

№ 22

ՍՍՀՄ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՈԼՅԱՆՍԿՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻՆ՝ ԵԳԻՊՏԱՀԱՅԵՐԻ ՆՎԻՐԱԲԵՐԱԾ ԴՐԱՄԸ ՍՍՀՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

№ 482

12 մայիսի 1945 թ.
Մոսկվա

Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղակալ
արքեպիսկոպոս Չորեքչյանին

Ձեր խնդրանքով ՍՍՀՄ ԺԿԽ[1] կից կրոնական գործերի խորհուրդը տեղեկանք կազմեց հավատացյալ հայերի կողմից հավաքված և Եգիպտոսում ՍՍՀՄ միսիային հանձնված գումարների մասին:

Ներկայումս հնարավորություն ունեմ հայտնելու Ձեզ, որ Եգիպտոսում ՍՍՀՄ միսիայի կողմից 1944 թ. փետրվարին իրականում ստացվել է 5500—00 եգիպտական ֆունտ, և նույն թվականի հունիսին 3062-59 եգիպտական ֆունտ:

Առաջին գումարն ստացվել է Ալեքսանդրիա քաղաքի հայերից, երկրորդը՝ Եգիպտոսի հայոց (առաջնորդական տեղապահից):

Երկու գումարներն էլ հանձնված են Եգիպտոսում ՍՍՀՄ միսիային՝ ՍՍՀՄ պաշտպանության ֆոնդին հանձնելու խնդրանքով:

Հաղորդելով այս մասին, հայտնում եմ ի գիտություն Ձեզ, որ նշված գումարները այդ խնդրանքի համաձայն 1944 թ. դեկտեմբերի 13-ի № 26/153 հանձնարարականով ՍՍՀՄ ֆինժողկոմատի միջոցով փոխանցված է ՍՍՀՄ պաշտպանության ֆոնդին:

ՍՍՀՄ ԺԿԽ կից կրոնական գործերի խորհրդի նախագահ
ստորագրություն (Պոլյանսկի)

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 409, գ. 1657, թ.15, բնագիր: Թարգմանված է ռուսերենից:

[1] ԺԿԽ. ժողովրդական կոմիսարների խորհուրդ: